# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

(Տեառ Առաջին)

Յիսուսի կեանքը

Դասաւորեց

Տէր Ներսէս Քհնյ. Փափազեան

Չորս Աւետարաններու և Գործք Առաքելոցի համաբարբառ միութեամբ յօրինուած:

(Կազմի ետևի մասում գրված է)

Յիսուսի կեանքը

Դասաւորեց

Տէր Ներսէս Քհնյ. Փափազեան

Չորս Աւետարաններու և Գործք Առաքելոցի համաբարբառ միութեամբ յօրինուած:

Թ. 86ա.—Շաղունակուած երկրորդ տետրին մէջ:

(Գրված է երկու անգամ) :

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի ետևի մասում գրված է)

Հասոյթը յօգուտ Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի:

(Սկզբի պահպանակի վրա գրված է մեքենագրված)

ՁՕՆ

«Յիսուսի Կեանքը» մակագրութեամբ աշխատանքս որդիական խոնարհութեամբ կը ձօնեմ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Սրբազնագոյն Կաթողիկոսի անուան իր յիսնամեակի և գահակալութեան երրորդ տարեդարձին երջանիկ առիթով:

Մատչիմ ի համբոյր օծեալ Ս. Աջոյն

Աստուածարեալ Հայրապետիդ

Որդիական խոնարհութեամբ

(ստորագրություն)

Տ. Ներսէս Քհնյ. Փափազեան

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի

Գահիրէ, Եգիպտոս

6 Հոկտեմբերի 1958:

## № 572
## ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ (Բ)

**Թերթերը՝** 96:— **Պրակները՝** 5:— **Մեծությունը՝** 23.7×17.3×0.8սմ.:— **Նյութը՝** սպիտակ բարակ թուղթ:— **Կազմը՝** նարնջագույն բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական հաստրակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միսյուն:—**Դատարկ թղթերը՝** ձեռագրի բոլոր թերթերի ետևի մասը դատարկ է:— **Տողերը՝** 25—29:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ներսես քահանա Փափազյան:— **Ժամանակը՝** 1950-ական թթ.:— **Վայրը՝** Կահիրե (Եգիպտոս) :— **Ծանոթագրություն՝** ձեռագրի հեղինակը 1958 թ. հոկտեմբերի 6-ին այն նվիրել է Վեհափառ Հայրապետին: Մայր Աթոռիս ձեռագրատունն մատյանը ստացավ Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—(Գլ. 24) Կեղծ աստուածապաշտութիւն և կոյրերու կոյր առաջնորդները:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից և 1983 թվականի № № Բ—Գ-ից և Է-ից:

Թ. 6ա.—(Գլ. 25) Հեթանոս կինը և այսահար աղջիկը:

Խուլ ու դժուարախօս պատանին:

Թ. 9ա.—(Գլ. 26) Եօթը նկանակի և մի քանի ձուկերու հրաշքը:

Կոյրի մը բժշկուիլը:

Զգուշանալ Փարիսեցւոց և Սադուկեցւոց վարդապետութենէն:

Պետրոսին տրուած սաստը:

Թ. 12ա.—(Գլ. 27) Քրիստոսի այլակերպութիւնը:

Լուսնոտի մը բժշկուիլը:

Քրիստոսի կրելիք չարչարանքները և Յարութիւնը:

Թ. 16ա.—(Գլ. 28) Առաջին ըլլալու պայմանը:

Դևեր հանող պատանին:

Գաւաթ մը ջուրի վարձքը:

Յիսուս և մոլորեալները:

Բարեխաղճ Տէրը և անգութ ծառան:

Առաքեալներուն շնորհուած կապելու և արձակելու իշխանութիւնը:

Թ. 19ա.—(Գլ. 29) Հրեաներուն վերաբերումը Յիսուսի հանդէպ:

Յիսուսի պատգամը ժողովուրդին:

Թ. 24ա.—(Գլ. 30) Յիսուս և մեղաւոր կինը:

Յիսուս աշխարհի լոյսը:

Թ. 27ա.—(Գլ. 31) Կոյրը և Սելովամի աւազանը:

Փարիսեցւոց մեղադրանքները:

Թ. 30ա.—(Գլ. 32) Ոչխարներուն ճշմարիտ հովիւը:

Քրիստոս փրկութեան դուռը:

Թ. 32ա.—(Գլ. 33) Աստուած ինքզինքը կը յայտնէ բարեպաշտ հաւատացեալներուն:

Տասը բորոտները:

Թ. 35ա.—(Գլ. 34) Կին արձակելու պարագան:

Կամաւոր ներքինիներ վասն արքայութեան Աստուծոյ:

Աստուածասիրութիւն և ընկերասիրութիւն:

Բարի Սամարացին:

Թ. 37ա.—(Գլ. 35) Յաւիտենական կեանքը ժառանգելու պայմանները:

Յիսուսի հետևող առաքեալներուն վիճակուած դերը:

Երկինքի թագաւորութիւնը և այգեպանը:

Թ. 42ա.—(Գլ. 36) Ապաշխարութեան անհրաժեշտութիւնը:

Անպտուղ թզենին և այգեպանը:

Շաբաթօրեայ բարեգործութիւններ:

Խոնարհութեան դասը:

Ընթրիքի հրաւիրեալները:

Յիսուսի աշակերտելու պայմանները:

Թ. 44ա.—(Գլ. 37) Անառակ որդին:

Թ. 46ա.—(Գլ. 38) Անիրաւ տնտեսը:

Աստուած և մամոնայ:

Մեծահարուստը և աղքատ Ղազարոս:

Թ. 50ա.—(Գլ. 39) Ղազարոսի յարութիւնը:

Քահանայապետներու ու Փարիսեցիներու վրդովմունքը:

Թ. 53ա.—(Գլ. 40) Հրէից պատիկը և Յիսուս:

Յիսուս իր աշակերտներուն կը պատմէ պատահելիքները:

Ճշմարիտ մեծութիւնը սպասաւորութեան մէջ է:

Զաքէոս փրկուած:

Թ. 55ա.—(Գլ. 41) Մարթա և Մարիամ:

Հոգևոր ապրումներ միշտ գերիվեր են աշխարհիկ մտահոգութիւններէն:

Մարիամ Մագդաղենացի կ'օծէ Յիսուսի ոտքերը:

Իսկարիովտացի Յուդայի դիտողութիւնը:

Թ. 56ա.—(Գլ. 42) Յիսուսի փառաւոր մուտքը Երուսաղէմ:

Թ. 60ա.—(Գլ. 43) Յիսուս Աստուծոյ տաճարէն կը վռնտէ վաճառողները:

Դպիրներու և քահանայապետներու դաւերը Յիսուսի դէմ:

Հզօր հաւատքի առաւելութիւն և ցանապան առակներ:

Թ. 63ա.—(Գլ. 44) Երկնքի թագաւորութիւնը և հարսնևորները:

Կայսրինն կայսրին և Աստուծոյն Աստուծոյ տուէք:

Սադուկեցիներու հարցումը և Յիսուսի պատասխանը:

Մեծագոյն պատուիրանը:

Թ. 66ա.—(Գլ. 45) Մովսէսի աթոռին վրայ բազմող դպիրները և Փարիսեցիները:

Աղքատ կնոջ լուման:

Յիսուսի կշտամբանքը Փարիսեցւոց և դպրաց:

Թ. 69ա.—(Գլ. 46) Յիսուս հոգեխոով:

Եսայի մարգարէին պատգամը:

Թ. 74ա.—(Գլ. 47) Մոլորեցուցիչները:

Առաքեալներուն նեղութիւնները:

Վերջին օրերու նախանշանները:

Թ. 79ա.—(Գլ. 48) Անձանձրոյթ աղօթել:

Անիրաւ դատաւորը:

Իմաստուն կոյսերը:

Տաղանդներու պատմութիւնը:

Ինքնագով մեղաւորը:

Վերջին դատաստանը:

Թ. 82ա.—(Գլ. 49) Զատկական պատրաստութիւն:

Զատկական ընթրիք:

Ոտնլուայ:

Յիսուսի մատնիչը:

Թ. 88ա.—(Գլ. 50) Յիսուս արգասաւորող որթը:

Յիսուսի սիրոյ պատուէրը:

Յիսուս և Պետրոսի ուրացումը:

Թ. 91ա.—(Գլ. 51) Յիսուս ճամբայ, ճշմարտութիւն և կեանք:

Մխիթարիչին գալուստը:

Թ. 93ա.—(Գլ. 52) Յիսուսի հոգևոր խորհրդածութիւնները:

Թ. 96ա.—(Գլ. 53) Յիսուսի խռովքը և վիշտը:

Իսկարիովտացի Յուդա կը մատնէ իր Տէրը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

(Տեառ երկրորդ)

Յիսուսի կեանքը

Դասաւորեց

Տէր Ներսէս Քհնյ. Փափազեան

Չորս Աւետարաններու և Գործք Առաքելոցի համաբարբառ միութեամբ յօրինուած:

Թ. 1ա.— Յիսուսի կեանքը

դասաւորեց

Տէր Ներսէս Քհնյ. Փափազեան

Չորս Աւետարաններու

և Գործք Առաքելոցի

համաբարբառ միութեամբ

յօրինուած:

Թ. 96ա.—Շարունակուած երրորդ տետրին մէջ:

(Գրված է երկու անգամ) :

№ 573

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ (Գ)

**Թերթերը՝** 87:— **Պրակները՝** 5:— **Մեծությունը՝** 23.7×17.3×0.8 սմ.:— **Նյութը՝** սպիտակ բարակ թուղթ: **Կազմը՝** նարնջագույն բարակ ստվարաթուղթ.— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական բարակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար: —**Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** ձեռագրի բոլոր թերթերի ետևի մասը դատարկ է, ինչպես նաև 37ա—87բ թերթերը ամբողջությամբ:— **Տողերը՝** 25—28:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Ներսես քահանա Փափազյան:— **Ժամանակը՝** 1950-ական թթ.:— **Վայրը՝** Կահիրե (Եգիպտոս) :— **Ծանոթագրություն՝** ձեռագրի հեղինակը 1958 թ. հոկտեմբերի 6-ին այն նվիրել է Վեհափառ Հայրապետին: Մայր Աթոռի ձեռագրատունը մատյանը ստացել է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 4ա.—(Գլ. 54) Յիսուս Աննայի և Կայիափայի առջև:

Պետրոսի ուրացումը:

Թ. 7ա.—(Գլ. 55) Յիսուս Պիղատոսի առջև:

Թ. 10ա.—(Գլ. 56) Հրեաները կը պահանջեն Յիսուսի մահը:

Թ. 13ա.—(Գլ. 57) Յիսուսի խաչելութիւնը ու մահը:

Թ. 15ա.—(Գլ. 58) Յովսէփ և Նիկոդեմոս նորափոր գերեզմանի մէջ կը դնեն Յիսուսի մարմինը:

Թ. 18ա.—(Գլ. 59) Քահանայապետները ու Փարիսեցիները կը կնքեն գերեզմանը և պահապան զինուորներ կը դնեն զգուշութեան համար:

Յիսուս Յարութիւն կ'առնէ:

Թ. 21ա.—(Գլ. 60) Յիսուս Էմմաուսի ճամբուն վրայ:

Թ. 25ա.—(Գլ. 61) Յիսուս կը յայտնուի իր աշակերտներուն:

Յիսուսի համբարձումը:

Թթ. 26ա—36ա.—Գլխակարգութիւն (նյութերի ցանկը) :

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

(Տեառ Երրորդ)

և վերջ:

Յիսուսի կեանքը

դասաւորեց

Տէր Ներսէս Քհնյ. Փափազեան

Չորս Աւետարաններու և Գործք Առաքելոցի համաբարբառ միութեամբ յօրինուած:

Թ. 24բ.—Վերջ (3 անգամ) :

Թ. 25ա.—Վերջ (3 անգամ) :

Թ. 36ա.—Վերջ (3 անգամ) :

№ 574

ԾԻՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

**Թերթերը՝** 94:— **Պարկները՝** 6:— **Մեծությունը՝** 20.5×17×1 սմ.:— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:— **Կազմը՝** մոխրագույն մոմլաթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական դեղնավուն հաստ թուղթ:— **Վիճակը՝** բավարար: —**Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 55ա—94բ:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1961—62 թթ.:— **Վայրը՝** Ս. Էջմիածնի վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Մուտք: Ծիսագիտություն:

Թ. 3բ.—Հայաստանյայց Եկեղեցու ծեսը:

Թ. 4բ.—Գլուխ Ա: Ժամերգությունն:

Թ. 6բ.—1. Գիշերային ժամերգություն:

Թ. 8ա.—2. Առավոտյան ժամերգություն:

Թ. 9ա.—3. Արևագալի ժամերգություն:

Թ. 10ա.—4. Ճաշու ժամերգությունք:

Թ. 10բ.—5. Երեկոյան ժամերգություն:

Թ. 11բ.—6. Խաղաղական ժամերգություն:

Թ. 12բ.—7. Հանգստյան ժամերգություն:

Թ. 13ա.—Ընդհանուր ծանոթություններ ժամերգության մասին:

Թ. 17ա.—Գլուխ Բ: Խորհուրդներ:

Թ. 18բ.—1. Մկրտություն:

Թ. 19բ.—2. Դրոշմ:

Թ. 20բ.—3. Ապաշխարություն:

Թ. 21բ.—4. Հաղորդություն կամ Ս. Պատարագ:

Թ. 28ա.—Գլուխ Գ: Խորհրդատետր կամ Պատարագամատույց:

Թ. 29ա.—Խորհրդատետր:

Թ. 33բ.—Շարականագիրք:

Ա. Գործնական շարականներ:

Թ. 34ա.—Բ. Հեղինակներ:

Թ. 35ա.—Գ. Շարականների կանոնը:

Դ. Շարականների պտումը և կանոնացումը:

Թ. 35բ.—Ե. Պարականոն շարականներ:

Զ. Շարականների գործածությունը ժամասացության մեջ:

Թ. 38բ.—Է. Շարականների եղանակները:

Թ. 39ա.—Ը. Շարականների խազերը:

Թ. 39բ.—Թ. Շարականների երգեցողությունը:

Թ. 40ա.—Ճաշոց:

Թ. 41բ.—Յայսմաւուրք:

Թ. 45ա.—Տաղարան և Գանձարան:

Թ. 47ա.—Գանձեր:

Թ. 49բ.—Տոնացույց:

Թ. 51ա.—Մաշտոց:

Թ. 52բ.—Կաթողիկոսական կանոններ:

Թ. 53բ.—Եպիսկոպոսական կանոններ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)

Ծիսագիտությ (ուն):

Թ. 1ա.—Ծիսագիտություն

Հ (ոգևոր) Ճ (եմարան)

Ս (ուրբ) Էջ (միածին)

II լս (արան)

Կ. Ք. Տ.

1961—1962 թթ.

դ [ա] ս [ա] խ [ո] ս Կոմիտաս Ք [ա] հ [անա]

Ս. Էջմիածին:

Թ. 52ա.—7—IV—1962 թ.

Վերջ

IV ժամ (Ծիսագիտություն) 12:20:

№ 575

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

**Թերթերը՝** 142:— **Պրակները՝** 8:— **Մեծությունը՝** 17.8×11.6×1.7 սմ.:—**Նյութը՝** դեղնած բարակ թուղթ: Բազմաթիվ թերթերում (12բ, 25բ, 29բ, 33բ, 39բ, 60բ, 67բ, 80բ, 96բ և այլն) կա ռուսական թղթի գործարանի ուղղանկյուն կնիքը, 2×1.3 սմ. չափերով, հանված ճնշումով, որի կենտրոնում նկարված է մի ձի, իսկ շուրջ բոլորը գրված հետևյալը.

Товарищество
№ 6
Кувшинова.—

**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի վրան գրված է ճնշումով «Հայաստանի աշխարհագրութիւն»: **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական թերթ հասարակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար, սակայն տեքստից չորս էջ պակասում է: 120բ-ի և 121ա-ի միջև գտնվող երկու թերթերը կտրված և հանված են:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 23բ, 50բ, 125ա—142բ:— **Տողերը՝** 21:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն տեքստի սկզբի «Հայաստան» բառի առաջին տառը (Հ) գրված է սև թանաքով և կարդագրով (թ. 1ա): Բացի այդ ձեռագրում կպցված է երկու գունավոր նկարներ՝ սկզբի պահպանակի վրա կա մի ձեռք, երկու վարդ և կանաչ տերևներ, իսկ թ. 84բ-ում կարմիր մի վարդ և դեղին տերևներ:— **Գրիչը՝** անհայտ: —**Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դարի վերջերին (1886-ից հետո): Տեսնել թ. 64ա:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրը պատկանել է պատմաբան Հակոբ Անասյանի գրադարանին: 1978 թ. այն նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ձեռագրատունս մատյանն ստացել է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրը պարունակում է Հայաստանի աշխարհագրության, տեղագրության և պատմության մասին արժեքավոր տեղեկություններ:)

Թ. 1ա.—Հայաստան:

Թ. 2ա.—Երասխի աջ ջրաբաշխի լեռները:

Թ. 3բ.—Երասխի աջ ջրաբաշխի լեռները:

Թ. 5բ.—Երասխ գետը և նրա վտակներ:

Թ. 6բ.—Երասխի ձախ կողմի վտակները:

Թ. 8ա.—Կուրի ջրաբաշխը:

Թ. 9բ.—Կուրը և նրա վտակները:

Թ. 10ա.—Կուրի աջ կողմի վտակները:

Թ. 11ա.—Ճորոխի ջրաբաշխը:

Թ. 11բ.—Ճորոխ և իր վտակները:

Թ. 12ա.—Աջ կողմի վտակները:

Ձախ կողմի վտակները:

Թ. 12բ.—Արևմտեան Եփրատի ջրաբաշխ:

Արևմտեան Եփրատի ջրաբաշխի լեռները:

Թ. 14բ.—Արածանի և Մուրադ գետի ջրաբաշխ:

Թ. 15բ.—Արածանի և նրա գլխատր վտակները:

Թ. 17ա.—Տիգրիս գետի ջրաբաշխ:

Արևմտեան Տիգրիսի ջրաբաշխի լեռները:

Թ. 17բ—Արևելյան Տիգրիսի ջրաբաշխի լեռները:

Թ. 18ա—Արևմտեան Տիգրիսը և նրա ճիւղերը:

Թ. 18բ.—Արևելեան Տիգրիս կամ Բոհդան չայ:

Թ. 19բ.—Վանայ լճի ջրաբաշխ:

Թ. 20բ.—Սևանայ լճի ջրաբաշխ:

Թ. 21բ.—Ո (ւ) րմիոյ լճի ջրաբաշխ:

Թ. 22բ.—Լճակներ:

Թ. 24ա.—Հայաստանի բարձրավանդակները և դաշտերը:

Թ. 28ա.—Հայաստանի հանքերը և հանքային ջրերը:

Հրահալելի նիւթեր:

Թ. 28բ.—Աղեր:
Թ. 29ա.—Վառող նիւթեր:
Թ. 29բ.—Հանքային ջրեր:
Թ. 30բ.—Արածանու հովտում:
Թ. 31ա.—Հայաստանի կլիման:
Թ. 34ա.—Բուսականութիւն:
Թ. 36բ.—Կենդանիներ:
Թ. 39ա.—Թռչուններ:
Թ. 40բ.—Հայաստանի բնակիչները:
Թ. 47ա.—Հայոց Եկեղեցին և լեզուն:
Թ. 51ա.—Ռուսական Հայաստան:
Մասն քաղաքական:
Թ. 51բ.—Երևանյան նահանգ:
Թ. 52ա.—Ա. Երևանի գաւառ:
Թ. 54ա.—Բ. Էջմիածնի գաւառ:
Թ. 56ա.—Գ. Սուրմալուի գաւառ:
Թ. 57ա.—Դ. Ալէքսանդրապոլի գաւառ:
Թ. 58բ.—Ե. Նոր Բայազէդի գաւառ:
Թ. 60ա.—Զ. Շարուր Դարալագեազի գաւառ:
Թ. 61ա.—Է. Նախիջևանի գաւառ:
Թ. 63ա.—Գանձակի նահանգ:
Թ. 65ա.—Ա. Զանգեզուրի գաւառ:
Թ. 67ա.—Բ. Ջիբրայէլի գաւառ:
Թ. 68բ.—Գ. Շուշու գաւառ:
Թ. 70բ —Դ. Ջիվանշիր գաւառ:
Թ. 72բ.—Ե. Գանձակի կամ Էլիսաւետպոլի գա-
ւառ:
Թ. 74բ.—Զ. Ղազախի գաւառ:
Թ. 76բ.—Կարսի զինուորական նահանգ:
Թ. 77բ.—Ա. Կարսի գաւառ (округъ):
Թ. 81բ.—Բ. Կաղզուանի գաւառ:
Թ. 83ա.—Գ. Արդահանի գաւառ:
Թ. 83բ.—Դ. Օլթի գաւառ:
Թ. 85ա.—Տաճկական Հայաստան:
Թ. 86ա.— Էրզրումի վիլայէթ:
Թ. 90ա.—Բաբուրդի սանջակ:
Թ. 91ա.—Բայազէտի սանջակ:
Թ. 91բ.—Ա. Բայազէտի գաւառ:
Թ. 92ա.—Բ. Դիադինի գաւառ:
Թ. 92բ.—Գ. Գարաքիլիսէի գաւառ:
Թ. 93ա.—Դ. Ալաշկերտի գաւառ:
Թ. 93բ.—Ե. Անտաբ գաւառ:
Թ. 94ա.—4. Երզնկայի սանջակ:
Թ. 95ա.—Վանայ վիլայէթ:
Թ. 95բ.—Վանայ նահանգ:
Թ. 96ա.—1. Վանայ կամ Տոսպայ գաւառ::
Թ. 98բ.—2. Բերկրի գաւառ:
Թ. 99ա.—3. Արճէշի գաւառ:
4. Արծկէի գաւառ:
Թ. 99բ.—5. Խօշաբ կամ Մահմուդի գաւառ:
Թ. 100ա.—6. Ոստան:
Թ. 100բ.—7. Մոկս:
Թ. 101ա.—Հէքիարի նահանգ (Սանջակ):
1. Աղբակի գաւառ:
Թ. 101բ.—2. Ջուլամերկ գաւառ:
Թ. 102ա.—3. Գևեր կամ Գեաւառ գաւառ:
Թ. 102բ.—4. Շատախ-Նորդուզ միացեալ գաւառ:
Թ. 103ա.—Բաղէշի կուսակալութիւն:
Թ. 103բ.—Բիթլիսի սանջակ:
Բիթլիսի գաւառ:
Թ. 104բ.—Գեօզալդարա գաւառ:
Թ. 105ա.—Մոտկան գաւառ:
Թ. 105բ.—Ախլար գաւառ:
Թ. 106ա.—Մշոյ նահանգ (Սանջակ):
1. Մշոյ գաւառ:
Թ. 107բ—2. Մանազկերտի գաւառ:
Թ. 108ա.—3. Բուլանըխի գաւառ:
Թ. 109ա.—4. Վարդոյ գաւառ:
Սղերտի նահանգ (Սանջակ):
Թ. 109բ.—Սղերտ գաւառ:
Թ. 110ա.—Ռըդուան գաւառ:
Նըչու գաւառ:
Թ. 110բ.—Կինճի նահանգ (Սանջակ):
Թ. 112ա.—Տիգրանակերտի վիլայէթ (կուսակալու-
թիւն):
Թ. 112բ.—Տիգրանակերտի նահանգ (Դիարբեքիրի
սանջակ):
Թ. 113ա.—Բ. Սիղուան Միլլիան:
Թ. 113բ.—Գ. Գիրիքի գաւառ:
Թ 114ա.—Արղանայ նահանգ:
Ա. Արղնի կամ Արղանայ գաւառ:
Թ. 114բ.—Բ. Անգղ կամ Անգեղ տուն գաւառ:
Գ. Ջերմոկ և Չնգուշ գաւառ:
Թ. 115ա.—Մարաթնի նահանգ:
Թ. 116ա.—Խարբերդի կուսակալութիւն:
(Մամուրէլ ուլ Ազիզի վիլայէթ):
Թ. 116բ.—Խարբերդի նահանգ:
1. Խարբերդի գաւառ:
Թ. 118ա.—2. Բալու կամ Բաղաբովիտ գաւառ:
Թ. 119ա.—Դերսիմի նահանգ:
1. Օվաճիղ գաւառ:
Թ. 119բ.—2. Չուժիկ գաւառ:
3. Փախ գաւառ:
Թ. 120ա.—4. Գզլքիլիսի գաւառ:
5. Աղքան գաւառ:
Թ. 120բ.—6. Չարսանջագ գաւառ:
Թ. 121ա.—Պարսկահայաստան:
Ատրպատական (Ադրբէջան):
1. Մաքու գաւառ:
Թ. 121բ.—2. Կոտուր գաւառ:
3. Սալմաստ գաւառ:
Թ. 122ա.—4. Որմիոյ գաւառ:
Թ. 122բ.—5. Խոյ գաւառ:
Թ. 123ա.—6. Մարանդ գաւառ:
Թ. 123բ.—7. Թաւրիզի գաւառ:
Թ. 124ա.—8. Մարաղա գաւառ:
Թ. 124բ.—9. Ղարադաղ գաւառ:

(Շարունակելի)